ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 349
20 սեպտեմբերի 2023 թվականի N - Ա

«ՍԱԼՎԱՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԱՆԴՐԱՆԻԿ ԻՎԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ԼԻԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 34-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը, 2023 թվականի սեպտեմբերի 19-ի հարցազրույցի N 4 արձանագրությունը և Անդրանիկ Իվանյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2023 թվականի սեպտեմբերի 20-ից «Սալվարդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հավակնորդ Անդրանիկ Իվանյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Լիանա Պետրոսյանին 2023 թվականի սեպտեմբերի 20-ից ազատել «Սալվարդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 20
ք. Կապան